Հարգելի հաճախորդ,

Խնդրում ենք մանրամասն ծանոթանալ «Առցանց հարթակով» Բանկի ինտերնետային կայքում Անձնական էջի միջոցով Ձեր քաղվածքների ստացման մասին ստորև ներկայացված տեղեկատվությանը:

«Առցանց հարթակով» եղանակն ընտրելու դեպքում անհրաժեշտ է իմանալ որ.

- Բանկի կայքում Անձնական էջում Ձեզ հասանելի կլինեն միայն այն ծառայությունների ամսական քաղվածքները, որից դուք օգտվում եք և որոնց տրամադրման ժամանակ Բանկի հետ համապատասխան պայմանագիր կնքելով՝ Դուք որպես քաղվածքների ստացման եղանակ ընտրել եք «Առցանց հարթակով» տարբերակը:
  Ուշադրություն՝ Եթե Ձեր հաշիվը (բացառությամբ վարկային հաշվի) հաշվետու ժամակահատվածում չի կրեդիտագրվել կամ դեբետագրվել, ապա տվյալ ժամակահատվածի համար Դուք քաղվածք չեք ստանա:

- Բանկի կայքում Անձնական էջով քաղվածքի ստացման համար Դուք պետք է նախ գրանցվեք Բանկի կայքում «Անձնական էջ» բաժնում, ինչից հետո արդեն կունենաք անսահմանափակ մուտքի հնարավորություն:
  Ստորև ներկայացված է քաղվածքների ստացման «Առցանց հարթակով» եղանակն ընտրելու դեպքում Բանկի կայքում Անձնական էջի գրանցման և հետագա կիրառման ուղեցույցը:

Քաղվածքների ստացման «Առցանց հարթակով» եղանակն ընտրելու դեպքում Բանկի կայքում «Անձնական էջ» բաժնում գրանցման և հետագա կիրառման ուղեցույց

1. **Քայլ 1՝** Բանկի պաշտոնական կայքում «Առցանց հարթակով» քաղվածքի ստացման համար պետք է գրանցվել Անձնական էջ բաժնում՝ սեղմելով **«Քաղվածքներ»** կոճակը:

Պատկեր 1



2. **Քայլ 2՝** Բացված պատուհանում պետք է գրանցվել՝ մուտքագրելով Ձեր տվյալները համապատասխան դաշտերում (տես՝ Պատկեր 2):

Ուշադրություն՝ գրանցված տվյալները պարտադիր պետք է համընկնեն Ձեր կողմից Բանկին տրամադրված տվյալների հետ, հակառակ դեպքում գրանցումը հնարավոր չի լինի իրականացնել:

Պատկեր 2



3. **Քայլ 3՝** «Գրանցվել» կոճակը սեղմելուց հետո՝
   - ➢ Ձեր բջջային հեռախոսահամարին ավտոմատ կուղարկվի SMS հաղորդագրություն համապատասխան գաղտնաբառով, որը կայքում մուտքագրելով կհաստատեք Ձեր գրանցումը (տես Պատկեր 3):
   - ➢ Դուք կստանաք SMS հավաստում, որ գրանցվել եք և այսուհետ այն ծառայությունների ամսական քաղվածքները, որոնց համար ընտրել եք «Առցանց հարթակով» քաղվածքների ստացման եղանակը, հասանելի կլինեն Անձնական էջում:

Պատկեր 3



4. **Քայլ 4՝** Քայլ 3-ից հետո Բացված նոր պատուհանում անմիջապես կբացվի **«Քաղվածքներ»** բաժինը, որում արտացոլված կլինեն համապատասխան ծառայությունների տեսակները (տես Պատկեր 4):

Պատկեր 4



5. **Քայլ 5՝ Ձեր** Քաղվածքները ամսական կտրվածքով Բանկի կողմից ավտոմատ կերպով կներբեռնվեն Ձեր Անձնական էջի «Քաղվածքներ» բաժնում և հասանելի կլինեն Ձեզ ըստ համապատասխան ծառայության տեսակի և ըստ ամիսների (տես Պատկեր 5):

Պատկեր 5



Ուշադրություն! Քաղվածքները հասանելի կլինեն PDF ձևաչափով ինչպես Ձեր կողմից դիտելու համար, այնպես էլ ներբեռնելու/պահպանելու և Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու համար (տես Պատկեր 6):

Պատկեր 6